ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐ

MINISTRY OF DIASPORA OF
THE REPUBLIC OF ARMENIA

MINISTER

Հարգելի պարոն Խարաջանյան,

Ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ՝ Նոր տարվա և Սուրբ Ծննդյան տոների առթիվ:

Մաղթում եմ, որ 2017 թվականը մուտք գործի Ձեր հարկի տակ՝ պարգևելով Ձեզ և Ձեր հարազատներին անսահման երջանկություն, ուրախություն, սեր, հաճելի սպասումներ և բազում անակնկալներ:

Թո՛ղ 2017-ը լինի աշխատանքային և անձնական հաջողությունների ձեռքբերման, խաղաղության և կայունության, ազգային և համամարդկային իղձերի կատարման տարի:

Թո՛ղ ամենակարող Աստծու օգնությամբ և միջազգային հանրության բարի կամքի դրսևորման շնորհիվ աշխարհում խաղաղությունը վերականգնվի և ոչ մի մարդ ստիպված չլինի թողնել հարազատ տունն ու բռնել գաղթի հոգեմաշ ճանապարհը: Թո՛ղ ոչ մի ծնող չտառապի զավակի կորստի ցավից ու ոչ մի երեխա չզգա պատերազմի սարսափը:

Եվ թո՛ղ մենք ազգովին, Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնությամբ կարողանանք ճաշակել մեր թանկագին Հայրենիքն ավելի՛ կայուն, ավելի՛ ամուր, ապահով, ապագայի հանդեպ վստահությամբ լի տեսնելու բերկրանքն ու այդ ամենում մեր ներդրումն ունենալու երջանկությունը:

Բարի Նոր տարի և շնորհավոր Սուրբ Ծնունդ:

ԴՐԱՆՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՀ 0010, Երևան ,Վ.Սարգսյան 3
3 Str. V. Sargsyan, Yerevan, 0010

tel.: (374 10) 58 56 01 (801)
fax.: (374 10) 58 91 57
E-mail: minister@mindiaspora.am